

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմայն խմբագրատան մէջ:

()տարագրադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаско“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Տպարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Տպարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կաթօլիկութիւն և պապականութիւն:—
Ներքին տեսութիւն: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին
լուրեր: Սրտաքին տեսութիւն: «Re-
publique Française» լրագիրը հայ-կաթօլիկ-
ների մասին: Ֆրանսիա և հայերը: Նամակ
Թիֆլիսցի: «Մշակ» հեռագիրներ: Յայ-
տարարութիւններ: Տեղեկացոյց:

ԿԱԹՕԼԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱ- ՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հաւատը ոչինչ կապ չունի
ազգութեան հետ: Կարելի է,
օրինակ, այս կամ այն հաւատի
լինել բայց այնու ամենայնիւ ազ-
գութեամբ հայ լինել...

Այդ ճշմարիտ է: Բայց դժ-
բաղդապէս նոյնը չէ կարելի ա-
սել ամեն հաւատի մասին, օրինակ
այդ չէ կարելի ասել այն հաւատի
մասին, որ կապված է այնպիսի
եկեղեցական կազմակերպութեան
հետ, որ սկզբունքով ոչնչացնում է
ազգութիւնը, որ եկեղեցին ասելի
բարձր է դասում, քան թէ ազ-
գային զգացմունքը, որ ստիպում
է ազգի անհատներին արհամար-
հել ատել իրանց ազգութիւնը,
ուրանալ իրանց ծագումը, վերա-
դասել եկեղեցին ազգութեանը,
դաւաճանել իրանց ազգութեանը:

Հաւատը, այո՛, անձնական մի
համոզմունք է: Ում ինչ գործ ես
ինչ հաւատ ունեմ: Եւ հայ եմ
իմ մայրենի լեզուս հայերէն է, ես
գործում եմ, աշխատում եմ, ապ-
րում եմ իմ ազգիս համար,—բայց
թէ լուսաւորչական եմ ես, թէ
կաթօլիկ, բողոքական, յունադա-
ւան, թէ մահմետական, ո՛ւմ ինչ
գործ...

Ում ինչ գործ ես ինչպէս եմ
ազգութում, ինչպէս և ինչ ձեռով եմ
պաշտում իմ Աստուծուն:

Այդ բոլորը ուղիղ է:

Բայց երբ որ հաւատը կապ-
ված է եկեղեցական այնպիսի
կազմակերպութեան հետ, որ ըս-
կզբունքով թշնամի է ազգութեան,
ինչպէս, օրինակ, անդրաբեռնա-
յին կաթօլիկութիւնը, հռոմէական
պապականութիւնը,—այն ժամա-
նակ չէ կարելի ասել մի և նոյն
է ինչ հաւատի է մարդը:

Դա միթէ հաւատ է երբ ե-
կեղեցին այնպէս է կազմակերպ-
ված, որ պահանջում է թէ հայ
զաւակները իրանց զպրոցներում
հայերէն չուսնեն, դա միթէ հա-
ւատ է, որին պատկանելու ժա-
մանակ պէտք է համբերել որ եկե-
ղեցական ծէսերից և արարողու-
թիւններից մայրենի լեզուն աք-
տորված լինի և նրա տեղը մտցնելի
անհասկանալի, օտար լատինական
լեզուն: Դա ի՞նչ հաւատ է, որ
պահանջում է ժողովրդից, որ նա
հրաժարվի ինքն իր սեփական ե-
կեղեցական կալուածները, իր ժո-
ղովրդական փողերը կառավարե-
լուց, այլ կուրօրէն յանձնի այդ իր
կալուածների, իր փողերի կառա-
վարութիւնը մի որ և է Հասու-
նի կամայականութեանը, որին ի-
րաւունք է տրվում անհաշիւ կեր-
պով կուլ տալ ազգային դրամնե-
րը, ժողովրդին ոչինչ հաշիւ չը
տալ բաղմնութիւ ազգային կտակ-
ների անհետանալու մէջ և մի-
միայն հաշիւ տալ մի որ և է Հը-
ռոմի պապին...

Եթէ մենք թշնամի ենք պա-
պականութեան, այդ այն պատ-
ճառով չէ որ մենք ինքներս ուրիշ
հաւատի ենք պատկանում, բայց
այն պատճառով որ պապականու-
թիւնը հաւատ չէ միայն, այլ մի
անձոնի, անժամանակակից, հնա-
ցած, հակաազգային եկեղեցական
կազմակերպութիւն, որ չէ հիմն-
վում ազգային, ժողովրդական ըս-
կզբունքի վրա, ազգի իր հոգևոր
գործերում ինքնավարութեան վը-
րա, այլ մի եզովտական, սատա-
նայական մեքենայութիւն է, որ
ստեղծված է դորա համար, որ
ջնջի մի ազգի մէջ ամեն իրաւա-
բանական ազգային իրաւունքները,
ազգային յիշատակները, ազգի ինք-
նաճանաչութիւնը, ազգի բոլոր ա-
մենասուրբ յատկութիւնները, ինչ-
պէս նրա մայրենի լեզուն, նրա
բոլոր գաղափարները, ինչպէս հայ-
րենիքի գաղափարը և նրանց տե-
ղը դնի միմիայն երկու գաղա-
փար՝ կամայականութիւն ազգային
իրաւունքի տեղը և Հըռոմ իրա-
կան հայրենիքի տեղը:

Գործը մէջն է բոլոր զանազա-

նութիւնը ազատ կաթօլիկու-
թեան և պապականութեան
մէջ:

Կաթօլիկութիւնը հաւատ է,
դորան, ինչպէս ամեն հաւատի,
ոչ որ իրաւունք չունի դիպչել
Կաթօլիկութիւնը կարող է ազ-
գութեան հետ ձեռք ձեռքի տուած
ընթանալ: Բայց անդրաբեռնակա-
նութիւնը, պապականութիւնը եր-
բէք այդ չէ կարող անել, որով-
հետեւ նա կարող է միմիայն այն
ժամանակ գոյութիւն ունենալ,
երբ ջանում է ջնջել բոլոր ժողո-
վրդական իրաւունքները մի ազգի
մէջ, նա կարող է խոր արմատներ
զգել մի ազգի մէջ միայն այն
ժամանակ, երբ կարծորի մի ազ-
գութեանց նրա բոլոր ազգային
գաղափարները, հայրենիքը, մայ-
րենի լեզուն...

Միթէ Թիֆլիսի հայ-կա-
թօլիկները չեն տեսնում թէ ան-
դրաբեռնային կաթօլիկութիւնը
նոյնն է անում և Գերմանիայում
և Ֆրանսիայում և Իտալիայում:
Եթէ այդպէս չը լինէր, ի՞նչի
Գերմանիայում կը ծագէր մի ա-
զատամիտ կաթօլիկ կուսակցու-
թիւն, որ իրան հին կաթօլիկու-
թիւն անուանեց և որ իր ուղղու-
թեամբ նման էր մեր Թիֆլիսի
հայերի հակահասունեան կուսակ-
ցութեան: Ի՞նչի Գամբէտտայի և
Գրեվիի հանրապետութիւնը, Ֆը-
րանսիան, որ ինքն կաթօլիկ է,
մաքաւում է այդ քան սաստիկ
կերպով պապականութեան դէմ,
ի՞նչի Գամբէտտան իր օրգանի մէջ
«Republique Française» լրա-
գրում դեռ նորերումս ասում էր՝
«մեր ամենամեծ, ամենաստեղծ,
ամենաանհաշտ թշնամին՝ կղե-
րականութիւնն է, պապականու-
թիւնն է»:

Եւ այժմ նոյն Ֆրանսիական
ազատամիտ հանրապետութեան
ներկայացուցիչը օգնում է Թիֆ-
լիսիցի ազգի հայոց ազգը պապա-
կանութեան անդունդի մէջ, որպէս
զե խափանի հայոց ինդիքը, որպէս
զե ջնջի հայոց ազգութիւնը:

Եթէ Գամբէտտայի պէս մի
մեծ մարդ կարողանար լսել մեր
թոյլ ձայնը, մենք նրա խօսքերը

կրկնելով կատենք նրան «Այժմ՝
ձեր ազատամիտ, կաթօլիկ Ֆրան-
սիական հանրապետութիւնը, հա-
յոց ազգի ամենամեծ, ամենա-
ատեղի, ամենաանհաշտ թշնամին
հանդիսացաւ: Եւ եթէ հայոց խն-
դիրը Թիֆլիսցի կը խափանվի,
եթէ ամբողջ հայոց ազգութիւնը
կը կորչի, դորա մէջ մեղաւոր կը
լինի ազատամիտ Ֆրանսիան»:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երեւան, 10 մարտի

Ձեր պատուական «Մշակ» լրագրի 46 հա-
մարի մէջ Երեւանից գրած նամակումը, որի
հետ ուղարկված է յօդուտ «Երաւատեան
ընկերութեան» 200 րուբլ տեղի են ունեցել եր-
կու սխալներ, առաջինը՝ նուիրատուների ա-
նունների միջից դուրս է թողած այդ փողերը
ժողովող տ. Տիրուհի Սիւլբէ Երաւատեանցի
անունը և նրա տուած 10 ր., այդ պատճառաւ
տպած ցուցակի մէջ փոխանակ ստացած 200 ր.
դուրս է գալիս 190 րուբլ. երկրորդը՝ այդ փողի
ժողովելումը ես չեմ ունեցել ոչինչ մասնակցու-
թիւն և չը գիտեմ իմ անունը ինչպէս է ստա-
ցել այդ նամակի ստորագրութեան մէջ առաջի
տեղը: Չանագան կարծիքներ փարատելու հա-
մար խոնարհաբար խնդրում եմ տեղի տալ
«Մշակի» մէջ իմ այս փոքր ծանուցմանը:

Ընտիա Ղ. որդանեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Երեւան, 24 մարտի

Կարգալով պատուական լրագրի մէջ որ ար-
դէն յանձն է առել «Մշակի» խմբագրութիւնը
ստանալ «Երաւատեան ընկերութեան» անունով
եղած նուիրատուութիւնը և հասցեանել ըստ
պատկանելին, իմ կողմից ես ցանկանալով
մասնակցել ազգային լուսաւորութեան գործին,
բաց արելը մեր քաղաքի հասարակութեան մէջ
հանգանակութիւն յօդուտ «Երաւատեան ընկե-
րութեան» և շնչելով քաղաքի մէջ երկու օր
պ. բժիշկ Տէր-Ղրիգորեանցի, պ. Ֆարութիւն
հարութիւնեանցի և պ. Կարապետ Պիճկեանցի
հետ, որոց ետանդուն ջանքով ժողովեցինք առ-
այժմ երեք հարիւր ութսուն և հինգ րուբլ,
(385), որից փոստայի ծախքը վճարելուց յե-
տոյ, մնացեալ գումարը 382 րուբլի սոյն իսկ
նամակաւ ուղարկելով խմբագրութեանը, խո-
նարհաբար խնդրում եմ հասուցանել զայն ըստ
պատկանելին և պ. պ. նուիրատուների անուն-
ներին տեղ տալ ձեր պատուական լրագրում,
որպէս զե իւրաքանչիւր որ գիտենայ որ իւր
տուած նուէրը արդէն հասած է իւր նպատա-
կին:—Ահա նուիրատուների անունները:—Ստե-
փաննոս (Տ)աննեանց 50 րուբլի, Հովհաննէս
Բարայեանց 25 ր., Կարապետ Ֆարութիւնեանց
26 ր., պ. Վեռնիկ 10 ր., Երաւատեան Երեւ-
նիցի 10 ր., Խաչատուր Զաւարապետեանց 10
ր., Խ. ա. ք. 5 ր., Կալ. Թորոյեանց 10 ր.,
Յ. Խ. Գրիգորեանց 10 ր., Յակ. Կարսեանց

է գործում և ընկնում է միշտ մի և նոյն
որոշակի միջոցով։
Այնուամենայնիւ Պրանսիայի ազգեցու-
թիւնը մեծ է արեւելքում։ անկարելի է խօսել
Պրանսիայի մասին արեւելքի մի քրիստոնէայի
հետ, առանց նրա ազգերի առջև յարուցա-
նելու ազատութեան, անկախութեան և ար-
դարութեան երազները։ Բայց այդ ոչ «զգա-
յուն» լինելու, կամ կղերական զգեստներով
հաղթած լինելու պատճառով է, որ Պրան-
սիան այդքան կենսատու է։ Մեր ազգեցու-
թիւնը պէտք է պահպանուի առեւ լինել և
մի և նոյն ժամանակ առեւ զործնական հա-
յեացքներով, նա պէտք է զապի ընդմիջել
թէ կրօնական վեճերի և թէ ցեղերի մի-
մեանց դէմ ունեցած ատելութիւնների մէջ։
Նա պէտք է հետաքրքրուի բոլոր քրիստոնէա-
ների վեճակով, առանց բացառութեան։ Պը-
րանսիան կարող է նախապատել այս կամ
այն ցեղը, նա ունի այդ իրաւունքը և պար-
տաւորութիւնը, բայց նրա համակրութիւն-
ները չեն պէտք է զրգուեն ոչ ոքի ատելու-
թիւնը, որովհետեւ այդ համակրութիւնները
չեն պէտք է հիմնուին առաւելագոյն անկախ
նախազեմների վրա։ Ահա ինչ ուղղութեան
պէտք է հետեւի Պրանսիական զիպովան-
տիւնը և չեն հետանալ այդ շարժից, եթէ
նա նպատակ ունի Պրանսիական ազգի հի-
զիստութեանը առեւ մեծ նշանակութիւն
տալ արեւելքում։ Բոլոր մեր զիպովանտիւն
այդ չէ հաւանում, մենք այդ մասին շատ
կը ցուէինք, բայց այնու ամենայնիւ այդ
պէտք է պահուի լինելը։

ՅԱՆՆԱՍԻԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԷ

Պ. Ժիւլ Գրեյլիէն նախագահ ընտրվելու
ատիւն թիֆլիսից մի նամակ գրված էր
«Մասիս»-ը, որ յետոյ թարգմանութեամբ
տպագրուեց և Փարիզի «Temps» լրագրի մէջ.
մենք աւելորդ չեն համարեցինք կրկին հայե-
րէնի վերածել նրան «Մշակ» համար։
«Պ. Ժիւլ Գրեյլիէն հայրենակիցները, ա-
սում է թիֆլիսի թղթակիցը, իրաւունք ու-
նեն հրճուելու նոր ընտրութեան վրա, որով
հետեւ նոր նախագահը իր պատուական յառ-
կութիւններով, իր արդարամտութեամբ և ի-
մասնութեամբ վերածննդ հասարակայնու-
նեան Պրանսիայի կենդանի պատկերն է։
«Մենք Պարիզի մի հետաւոր նահանգում,
Անդրկովկասի մէջ բնակող հայերս որոնց
մասնակցում ենք Պրանսիայի բերկրաւորին։
Թեւեալ զարմանալի թուի ձեզ, որ մեր հա-
մազգիների այս ձգնաժամին, երբ հայ ազգի
որդան կազմող երկիրներն իրաւունք կործա-
նուելու վտանգի մէջ են հարստահարութեան
և ճնշման կրակից, — կը զարմանաք, որ այս
զանաւորութեան քաղաքի իրաւունքի վիշտը զգա-
լով, մենք կամենում ենք հաղորդ լինել մի
օտար ազգի ցնծութեանը։ Գնչուս բացառ-
րէլ մեր անբարեկամ արտի դուարթ թողելու
զանչ միաբանութեամբ մի ուրիշ ազգի արտի
հետ, որ այնքան միջոցներով մեղքից զա-
տւած է։
«Թեւեալ առեւ յարմար կը լինէր որ ան-
թիւ զընտրեցնելը տառապեալ Հայաստանը
նորով կարգար քաղաքակրթութեան և եւ-
րօպայի դէմ, քանի որ սօքա չը կամին վերջ
գնել քուրդերի և չըքեղեցիների բարբարոս-
կան ոճի իրենքին, որք զործվում են հեղ և
աշխատաւոր հայերին միանգամայն բնաջինջ
անելու մտքով։ Թեւեալ ներքին էր մեզ հայհայել
այդ քաղաքակրթութիւնն և նորա զոյութիւնն
անդամ ուրանալ, քանի որ XIX դարու լու-
սաւորութեամբ պանծացող եւրօպան խուլ է
մնում դէպի մեր լեզված կղերական հա-
նաւանքը, քանի որ սոցա կրած չարքարներ
չափն արդէն լրացած է և մեր ազգութիւնը
մահաւոր գերեզմանին հասած։
«Բայց ոչ յուսահատութեան մեամբ

մարերը յաղթանակ չեն գրաւել մեր վրա։
«Եւրոպի որ յունիսի 4-ի դաշնադրու-
թեամբ Անգլիան յանձնառու էր եղել յա-
ռաջ ամենաւր Փոքր Ասիայի, ուրեմն և հա-
յաստանի մէջ զործուելը թէ՛ ծորմները, թէ՛
մեր տաճկաբնակ եղբայրները վերջապէս կը-
տանան անձի և զոյքի ապահովութիւն և
կարող կը լինեն շարունակել իւրենց քա-
ղաքակրթիչ պաշտօնն Արեւելքում։ Սակայն
նրբան էր մեր մարտութիւնը։ Անգլիան — այս
իրողութիւնը անկրեւ է — յիշեալ դաշնադր
հաստատելիս ոչ այնքան ճշմարիտ ազգերին
օգնականութեան զօրավիգն լինելն է ունե-
ցել մտքում, որքան որ իւր ետամոյական շա-
հերը։
«Արդ մթ թէ մի տարօրինակ բան կերեւ-
եաւոր հայրենաց վշտակից կովկասեանակ
հայերիս ուրախութիւնը, եթէ լսէինք որ
Մեծ-Բրիտանիայի կառավարութեան ղեկը
պ. Ժիւլ Գրեյլիէն պէս մի ազնիւ մարդու
ձեռքն անցած է։
«Մենք այստեղ փառահալ ենք, որ այսուհե-
տեւ Պրանսիան առեւ զործու գեր պիտի խա-
ղաչ արեւելեան գործերի մէջ։ Նեղված ազ-
գութիւնները արդի Պրանսիան և սորա իս-
կական աւանդութիւնները ձանաչելով, պիտի
յուսան, որ նոցա ձայնը յօժարութեամբ կը
լսվի այս մեծ ազգից և սորա միջամտու-
թեամբ նոցա տանջանքը գեթ կամեղքի։
«Պրանսիան իր արեւան գնով ցոյց տուաւ մարդ-
կութեան սորա յատուկ ձանաչարհը. նա
էր որ միշտ կատարեալ անշահախորթութեամբ
օգնութեան ձեռք պարզեց որ և բքեալ ազ-
գերին։ Թող Պրանսիան բանայ իր զիրկը մեզ
համար. մենք շնորհակալ կը մնանք նորանց և
մեր որդիքն ու թոռները մարդկութեան օգ-
տին ծառայելով, մի օր երախտագրութեան
ամենախորուն ապացոյց կը տան Պրանսիական
ազնիւ ազգին։»
«Temps» — թիֆլիսից իր կողմից շարու-
նակելով գրում է.
«Ահաւասիկ մի հայի ձայն, որ խօսում է
իր համազգիների ահազին մեծամասնու-
թեան, այն է լուսաւորչական հայերի ա-
նուամբ։ Պրանսիական զիւսանադիտութեան
միտքը մինչև այժմ լարված է եղել միայն
կաթիլի հայերի, այսինքն մի շնչին փոքրա-
մասնութեան վրա։ Մենք չէինք կշտաբի
նորան այս փոքրամասնութեան պաշտպան
կանգնելուն համար, թէ որ պաշտպանու-
թիւնն արդար գործի նուիրած լինէր։ Ար-
դէն կշտաբած ենք և ցաւով արտի զարձեալ
պիտի կշտաբենք, որ նա հայերին վերա-
բերեալ պոլիտիկայի մէջ առաջնորդում է
կրօնական նախապաշարմունքով և Արեւելքում
կաթիլիական պրօպագանդա անելու ցնորա-
կան հաշիւներով։ Աւստի թող ոչ ոք չը զար-
մանայ, եթէ ասեմք որ Պրանսիան ունի և
պարտ է ունենալ մի հայկական պոլիտիկա,
և թէ այլապէս կարող էլ չէ լինել։ Օտա-
րազգի ղեկավարների ազգեցութիւնը Կ.
Պօլի մէջ ամեն բանի վրա տարածվում է։
«Եթէ Պրանսիան շատ անգամ ուղղակի մի-
ջամտել է հայոց գործերի մէջ, նա արեւ է
այդ միայն կաթիլի հայերի պատճառով։
Սակայն մոռանալ, որ ուրիշ հայեր էլ կան,
զոհել մեծամասնութեան շահերը փոքր մա-
սին, սորա շնորհակալքը փաստակաւ հա-
մար, նպատաւոր լինել այս փոքրամասնու-
թեան մէջ իսկ անդադնական տարբին Կ.
Պօլի ազատականին, — կը նշանակի պոլիտիկայի
ներհակ վարվել, այժմ որ ազգեցութեան
ինքիներն առաւել քան երբ և ինչ նշա-
նակութիւն ունեն, մանաւանդ Արեւելքում։
«Հակահաստունան ժողովուրդը աստիկ յու-
գուած է այժմ դեր. Քիւրէիսիան յանկարծ
Հոմ երթաւոր և ամբողջ առջև խնարհ-
յուն որոշմամբ։ Սակայն մեզ թուում է թէ
այս մի լուի անձնական որոշում է, որից բնա-
պէտք չէ հետեցնել թէ ժողովուրդն էլ չու-

տով դէպի հնազանդութիւն կը դառնայ։
Մարերն ոչ ասկա յաղմուել պատճառում է
մանաւանդ Պրանսիական ղեկավարտան բրո-
նած ընթացքը այս գործի մէջ։ Ստոյգ է որ
ամեն մարդ խոստովանում է պ. Պրանսիէյի
ազնիւութիւնը. այնու ամենայնիւ աստիկներ
կան, թէ նորան շրջապատողները ոմանք, ու-
րոյ կղերական միտումներն այստեղ քաջ յայտ-
նի են, կարելոյն չափ աշխատել են արա-
տաւորելու նորա համբաւը։ Գեր. Քիւրէիսիանի,
մեկնելու միջոցին, «Մետաքսի Մարիթիմ»
նաւով, ըստ հրամանի ղեկավարտան նորան
մատուցվել են մեծամեծ պատիւներ։ Եթէ
պ. Գրեյլիէն, ինչպէս ասում են, մինն է եղել
այս անձինքներից, որք զրգել են, յորդորել են,
շնորհաւորել են դեր. Քիւրէիսիան, այժմ
նա շտապից հրաժարվել իր արածից, զոնչ
աստիկ պաշտպանում է իրան։ Աւստի հա-
տարակութեան առջև միայն մենք ենք մնում
պատասխանատու մի գործի համար, որով բը-
նաւ տեղիք չունենք պարծենալու, որովհետեւ
գեր. Քիւրէիսիան անակնկալ որոշման բուն
շարժաւորութիւնն մասին շատ փառ լուրեր են
չըջում այստեղ։»

ՆԱՍՏԱԿ ԹԻՖԼԻՍԻՑԻՑ

Կ. Պօլիս մարտի 25

Ձեզ յայտնի է որ այս վայրկեանիս մեր ամ-
բողջ հայոց հասարակութեան հետաքրքրող
հարցը կաթիլի հայերու հարցն է։
Եւր հարցի էութիւնն լաւ բնութեւն և ձեւ
ընթացողներուն կատարելագէտ հասկնելու
համար, հարկաւոր կը համարիմ վերադառնալ
գործի քանի մի տարվայ պատմութեանը։
Եւր 1868—1869 թերին Սիւլվաիւսի և
անխաղութեան վարդապետութեան պատճառա-
ծագեցաւ թիւրքիայի հայ-կաթիլիներու հա-
մայնքին մէջ երկպառակութիւն, ազատամիտ
հայ-կաթիլիները անընդհատ և եռանդուն գը-
րադրութիւն և յարաբերութիւն ունէին Գեր-
մանիոյ ազատամիտ, հին-կաթիլիներ անուան-
ված կուսակցութեան հետ, մանաւանդ անոնց
պարագլուխ համարված Տիւրքիէի հօր հետ։
Գերմանիոյ ազատամիտ կաթիլիներու հետ հայ-
կաթիլի համայնքի ունեցած փառ յարաբերու-
թեանն կրնանք վերաբերել հակահաստունանե-
րու այն ատեն ունեցած աղոյթութիւնն, մանա-
ւանդ որ նորանց գաղտնի պաշտպան հանդիսա-
ցած էր Գերմանիոյ գեապան։
Եւր մի ալ չը կարծէք որ հակահաստունանե-
նքն անգործ կը մնան։ Ոչ երբէք։ Եւր
զարձեալ կը յուզվին, զբաղուեցին կը պահ-
պանէին Գերմանիոյ իրանց դաւանակիցներու հետ
և մեծ յոյս ունին իրենց գրութիւնը բարեկար-
գելու, չը նայելով որ Բիւրպիսեան պատրիարքը
զաւաճանած է զազգը։ Եւր մի հակահաստու-
նանքն նորէն կը պահանջեն Բ. Գրեյլիէն նոր
պատրիարք մը ընտրելու։
Եւր հասարակ պէտք է ըսեմ, որ կաթիլիներու
ինքրի մէջ, կարծես, Գերմանիան պէտք է
Պրանսիոյ տեղը ընէր, որ իրեն մինչև այժմ
«protectrice du catholicisme en Orient» (արե-
ւելքի կաթիլիներու հովանաւոր) կանուանէր։
Եթէ պ. Պրանսիէյի պէս գեապաններ կունենայ
Պրանսիան, այն ատեն գեաւոր թէ Պրանսիան
կարող կը լինի իր հին հեղինակութիւնն պահ-
պանել արեւելքին մէջ։
Հիւսսանք որ շուտով փոխվելու է Պրանսիոյ
ընտած սեալ քաղաքականութեան ընթացքն։
«Մշակ» մէջ կարդացած ենք, նաև «Մա-
սիս» ալ կը գրէ, որ Եւրօպայի վարդապետ
Ռաբիւսեան ձեւ կողմերը եկեր, Հայաստանի
մէջ բացուելիք (երեւակայական) երկրագործական
վարժարանի մը անունով և կամ թէ Բէրա իր
ունեցած զարմանալի անունով փողեր կը հաւաքէ
եղբ. Կը զարմանալ ասոր վրա, վասն զի ամե-
նէն այնպիսի երկրագործական վարժարանի
եւսող չեկայ այստեղ։ Թիւրքիային մէջ այնպիսի
բան ալ անհնարին կը կարծեմ, վասն զի գող
և աւազակ ամեն կողմեր, ուստի և Եւրօպայ
ալ լեցուն են, և չեկայ ապահովութիւն Հա-
յաստանին մէջ երկրագործական վարժարանի
մը յարաւա զոյութեան համար։ Իսկ իր զբաղ-

րոցը, որ Բէրա կը գտնուէր, վաղուց է որ
գոցուած է և մանուկներն ալ ցրուած են։
Աւստի կը հարցունեմք ինչ նպատակին համար
փողեր կը ժողովէ եղբ.։
Մեր ընդհանուր ազգային գրութիւնը, ինչ-
պէս ասալին նամակիս մէջ ալ գրած էի, շատ
անմիթար է։ Գործողներէն ամեն մին իր կողմ կը
քաշէ, իւրաքանչիւրը նախանձէ և փառասիրու-
թիւնէ շարժուած, ընդհանուր անձնական կը
զարձեն։ Խորքէն Եւրօպայի ամեն միջոցի զգործ
կը գնէ որպէս զի ինքն պատրիարք ընտրուի։
Խորքէն հետեւ կը մնայ պատրիարքութեան
և կը շարունակէ գէնք անուր. քարոզներ կար-
գալ եկեղեցիներու մէջ։ Թէև հայերը, ըմբռնե-
լով անձնապաշտպանութեան օգուտն, այժմ ա-
մեն տեղ կը գնաւորուին, և շատ գէնքեր ան-
ցած են Եւրօպայէն դէպի Հայաստան, բայց
ժողովուրդը զարձալ առանց առաջնորդների կը
մնայ, վասն զի հարուստներն և ամիրաններն կը
վախնան մի քայլ անգամ ընել, իրենց գրու-
թիւնն, կայքը, հարստութիւն չը կորսնցնելու
համար։ Գաւառ կը մնայ օրիկան երու, որոնք
օշինջ կորսնցնելու չունեն։
Կ. Պօլիս հայոց քանի մը ջըջանքներով յուզ-
ված է այն միտքը, որ բոլոր այլ և այլ դա-
ւանութիւններին պատկանած հայերը միացունե-
լու միակ հնար է եպիսկոպոսներէն ազատելու
և մի ընդհանուր հայոց պատրիարք ընտրելու
աշխարհականներէ, որ թիւրքաց հայոց համայն
ազգին քաղաքական ներկայացուցիչ պիտի հա-
մարվի։

Ո.

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 6 ապրիլի։ «Правит. Вѣс-
тн.» լրագիրը հաղորդում է, որ Բուսովում
(Բոնի վրա) ապրիլի 2-ին երեկոյան անկար-
գութիւններ պատահեցան։ Սմբոխի կատա-
ղութիւնը այն աստիճանի հասաւ որ ստի-
պուած էին զիմել զինուորական ոյժին։ Կա-
տաղի ամբողջ ջարդից պոլիցմէստերի, նրա
օգնականի և պաշտօնակատարների բնա-
կարանները։ Առաջին երկուսի բնակարան-
ներում ամեն բան ոչնչացած և կո-
րուպտած է։ Պոլիցմէստի վարչութեան և
նրա երկու բաժինների մէջ բոլոր ընթացող
գործերը ոչնչացած են, իրական ապացոյցները
յափշտակված են։ Նօթլերկալից կանգնած
կօպիները և ճազանօղի զինուորական բա-
ժինը վերջ գրին անկարգութիւններին։ Ապ-
րիլի 3-ին առաւօտը ներքին գործերի մի-
նիստը ուղարկեց այնտեղ կատարող պոլի-
ցիայի զիւրկտոր Կաստրօլուին։
Ս. ՊԵՏԵՐԲՈՒԳ, 6 ապրիլի։ «Правит.
Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ի նկա-
տի անունով անդադար կրկնող յանցաւոր
փորձերը ձեռնամուկ լինել կայսերութեան
պաշտօնականների և նոյն իսկ Քաղաւորի
կենսքին նշանակվում են ժամանակաւոր գը-
լատոր նահանգապետների առանձին արտաքոյ
կարգի իրաւունքներով Պետերբուրգում, Բար-
կովում և Օդեսայում։ Նոյնպիսի իրաւունքներ
տրված են Մոսկովայի, Կիւիլի և Վարշաւայի
զիւստոր նահանգապետներին։
Կ. ՊՈԼԻՍ, 8/20 ապրիլի։ Գերմանական
գեապանի և անդլիական հաւատարմատարի
հռանդուն միջամտութեան պատճառով յո-
գուա կօմիլեցիայի կապվելուն Նօյի-Բագարի
վերաբերութեամբ, Սուլթան հրատարակեց մի
իրաւէ, որով հրամայում է ստորագրել յիշեալ
կօմիլեցիան։ Գործով վերջ է արված թիւր-
քաց մինիստրական կրկնակին թէ մեծ-վիլիերի
և թէ Կարալիէօղլի փաշայի վերաբերու-
թեամբ։

Խմբագիր — Հրատար. ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Դ Ա Դ Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ի

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թ.ին

ԿԸ ՀՐԱՏԱՐԵԿՎԻ ԵՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերէն:

1 լրագրի դիմաց և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՆՆԻ ՀԵՌԵՐԻՆԵՐԻ «ՄՇԱԿ» տարեկան դիմար 10 րուբլ է, կէս տարեկան 6 րուբլ: Գրվել կարելի է ՄԻԼՅՆ ԽՄԵՆԻՍԵՆՆԵՐԻ մէջ:

ԵՌԱՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կօպէկով հատար: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցեով ТИФ-ЛИСТ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԲՈՒՆԻ

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА
ОБЪЯВЛЕНИЕ

Съ 10 Апрѣля будутъ въ движеніе товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Поѣздъ № 5				Поѣздъ № 6			
Станціи.	Приходъ.		Отходъ.	Станціи.	Приходъ.		Отходъ.
	Ч.	М.			Ч.	М.	
Поти	—	—	6 вечера	Тифлисъ	—	—	12 56
Ріонъ	1	25	2 20	Гори	4	15	4 35
Квирилі	3	46	4 59	Михайлово	6	25	6 45
Михайлово	9	36	10 06	Квирилі	11	44	12 15
Гори	11	55	12 20	Ріонъ	1	24	1 54
Тифлисъ	3	51	—	Поти	6	35	—

Пассажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.

ԵՐԿՈՒՇԱԲԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԸ

ՊՐՕՖԷՍՈՐ ԲԷԿԵՐ

Տպու է ԳՕԳԷՖԻՈՒԱ Եղադրների ցիրկի մէջ ներկայացումներ:

Պրօֆէսոր Բէկեր, որ մի երեւելի ձեռնածու է (Ֆիզիկոսիկ), այսուհետեւ տպու է իր ներկայացումները իւրաքանչիւր երկուշաբթի և ուրբաթ օրերը:

ՏԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ

Լօժաներ 7 րուբլ, աթօներ 1 կարգի մանկի շրջանում 2 ր. 50 կ., աթօներ մը նայած կարգերի նոյն շրջանում 2 ր., 1 կարգ աթօների շրջանից դուրս 2 ր., 2 կարգի 1 ր. 50 կ., առաջին տեղ 1 ր., 2 տեղ 60 կ., զաւերէս 30 կ.:

Տոմարներ կարելի է ոտանայ ամեն օր, առաւօտեան 10 ժամից սկսած 3իրկի կայում:

Մինչև 8 տարեկան երեխաներ վճարում են 1 տեղի համար 50 կ., 2 տեղի համար 30 կօպէկ:

ПОРТНОЙ ИЗЪ ПЕТЕРБУРГА ГЕР-МАНЪ на Гановской улицѣ въ домѣ Іоанисіани Имѣю честь извѣститъ почтеніишему публику, что принимаю заказы своими товарами ноонныя и статскія платя и исполняю собственнымъ присмотромъ и также отдаю на прокатъ разныя костюмы кромѣ того въ моемъ магазинѣ имѣется мужскія и дѣтскія костюмы заказы и продажа производит-ся по весьма умѣреннымъ цѣнамъ.

1-10

Ազգ
Գառնիկ Ալէքսանդր Զարուծիւնեան, որը մականունը Սարգեան Արվաղի. Կ. Պոլսի Բն-րայի Թաղը Տնած, 18—20 տարեկան, արհեստը գրաշարութիւն, ինքը բարձրահասակ երկու տարի է որ անդրեացի վաճառականի մը հետ ապէ (Պոլսէն) երած շոգենաւով Փոթի զրաւու, անիկ ալ Քիֆլիսանցիւն իւր պատասխաւ ձամբայ երած օրէ մինչև ցայսօր և ոչ մի լուր առնուած է. հայրը և մայրը մը ունի. ով որ տեսած է ինչեալ երիտասարդը, մարդասիրաբար ազգային լուս-գրաց իմաց տալու շնորհի ընկը կողաչուի:

„Ն ու է ր . ք ե ա ս ի ր . գ ե ղ ղ ց ի ն ե ր ի ն“
անունով նոր դուրս եկած բրօշերը ծախվում է հատը 15 կօպէկով Քիֆլիսի Կենտրոնական և Զարարից Գրիգորիանի գրաքանդաւանոցներում: Հարկում առնողներին կը լինի 20% զիջում, եթէ անվճար հաշուան դէպի մեզ այս հասցեով. Тифлисъ Григорію Теръ-Меликсетову. въ Сололакъ, на Сололакской улицѣ, у Вознесенской церкви, въ д. Михаила Галустова, подъ № 110.

Գրիգոր Տէր-Մելիքեան:

Բժիշկ Աւետիք Բարսեան (Բարսեյ) ընդունում է հիւանդներին Քիֆլիսի բժշկանոցում շրջաբերթի, հիւնդաբերթի և շարժօրերը ջրային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու: Բացի այդ բժիշկ Բարսեան (Բարսեյ) հիւնդաբերթի և շարժօրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցող կամ էլ կարականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին: Հասցեն Սերգիեյեւայա փողոց, տու Բայնդուրովի:

7-10

ԱՊՐԵԼԻ 11				ՏԵՂԵԿԱՑՈՅՏ				ՔԻՖԼԻՍ 1879.			
ՔԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՅ (Ապրիլի 10-ին)				ՀԵՌԵՐԻՆԵՐԻ				ՓՕԹԻ-ՔԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ՔՈՒՂԻ			
Ոսկին (պողոնմաներիւր)	8	55	—	Կոփկատի և Ան-գրիկատի քա-	1	—	—	Քիֆլիսից մինչև Փօթի (Հանապարհորդների գնացքը)	9	—	—
Հին 82 ար. մ. արծ. 1000 մ.	1500	—	—	Ռուսաստան	2	—	—	Մինչև Միխայլովօ (խառն գնացքը)	5	—	—
Հին 20 կ. 72 ար. 1000	1740	—	—	Աւստրիա	3	—	—	Փօթի:	18	—	—
Վրացիների 50% առաջի փոխառութեան տու. 100	241	—	—	Անգլիա	4	—	—	Փօթի:	18	—	—
Ներդրող 50% վրացիների	100	—	—	Գերմանիա	2	88	—	Փօթի:	18	—	—
Մարտերի կուրսը 244—	100	—	—	Ֆրանսիա	3	75	—	Փօթի:	18	—	—
Լօնդոնի կուրսը Փղեսայի վրա.	105	19	—	ԱՆԴՐԱՊՈՎԱՍՏԵԱՆ ՄԱՆ-ԿԱՐԱՐՁԱՎԱՆ ԴՊՐՈՅ (Վէրացի փառ № 38)	—	—	—	Փօթի:	18	—	—
Վենայի կուրսը աճէ 113 զլ.	100	—	—	Մինչև Փօթի	9	21	5. 18	Փօթի:	18	—	—
Կարբի բարաթը.	5	85	—	Փօթի:	11	58	9. 43	Փօթի:	18	—	—
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	320	—	—	Միխայլովօ.	1	29	11. 57	Փօթի:	18	—	—
Փոթի ֆիլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—	—	Փօթի:	6	47	—	Փօթի:	18	—	—
Շաքարը բրցկու.	7	40	—	Փօթի:	9	40	—	Փօթի:	18	—	—
Միս տեսակը.	7	30	—	Փօթի:	9	13	—	Փօթի:	18	—	—
Շաքար աւաղը.	5	60	—	Փօթի:	12	13	—	Փօթի:	18	—	—
Մարանդի.	5	80	—	Փօթի:	5	39	1 37	Փօթի:	18	—	—
Մաքուր վառարած	12	50	—	Փօթի:	7	5	4. 8	Փօթի:	18	—	—
Բաժնադր երեսուն Ա-	7	60	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
մերկայի սերմից.	7	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Միս տեսակը հին սերմից.	7	50	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Բուրբը թուշի.	7	20	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Մարաթի.	4	20	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Ալիւրը Երազալու.	1	70	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Ներանի.	—	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Գարին	1	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Մամր բնաճարի (սեպ.)	12	60	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Մետաքսը Նուխայ.	200	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Կարբի Երազալու.	140	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Կոկոնը Նուխայ (սեպ.)	40	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Ֆրիզոնը (լաւը) Ազու-լայ	55	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Կօֆէն մօթի.	27	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Միսնի.	22	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—
Մարտիային	18	—	—	Փօթի:	9	31	7. 56	Փօթի:	18	—	—